ՍԻՐԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՊՏՀ իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնի դոցենտ,
քաղաքագիտության թեկնածու

ԱՐԴԻ ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԸ ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՊԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՌՁԵՎ

Նախորդ հազարամյակի ընթացքում քաղաքական հայանպաստ մտքի բացակայության պայմաններում բարոյական ըմբռնումների վրա հիմնված և մշտապես դրսևորված պաշտպանական ռազմավարությունը պարտադիր կերպով անհրաժեշտ է փոխարինել XXI դարի հայ քաղաքագիտական համակարգված մտքի քարոզչական-հարձակողական ռազմավարությամբ: Հայաստանի Հանրապետությունը, Արցախի հետ միասին, երբեք չի կարող ունենալ երաշխավորված ապագա, եթե առաջիկա երկու տասնամյակների ընթացքում չկայանա որպես տարածաշրջանային ռազմաքաղաքական գործոն:

Հիմնաբառեր. *աշխարհաքաղաքականություն, քաղաքական մարտահրավեր, ռազմավարություն, ռազմաքաղաքական գործոն, գոյատևման ռազմավարություն, զարգացման ռազմավարություն, քարոզչական ռազմավարություն*

JEL: Y8, Y9, Z1

Համապարփակ հայացք ձգելով արցախյան ազգային-ազատագրական պայքարի ընթացքի և անկախ պետականության կայացման բարդ ու հակասական գործընթացների վրա՝ համոզվում ենք, որ մեզանում եղել են և այժմ էլ կան քաղաքականության մեջ պատրանքներին և բարոյականությանն ապավինելու բազմաթիվ փորձեր, որոնց համար ընդհանրապես բացակայում են պատմական հիմքերը:

Վերը նշված խնդրի խոր ու համակողմանի վերլուծությունը ցույց է տալիս, որ հարկավոր է ազգովին փոխել վերաբերմունքը քաղաքական պատ-

րանքների ու բարոյական հաղթանակների մասին մտացածին ու սին առասպելների նկատմամբ և, աշխարհաքաղաքական նոր պահանջների էությունն ըմբռնելով, քաղաքական որակապես նոր մտքի գործադրումով փորձել դիմագրավել ներկա փուլի տարաբնույթ մարտահրավերներին:

Առաջին խնդրի լուծումը, որը ծառացած է հայոց քաղաքական մտքի առջև, այն է, որ հարկավոր է պայմանականորեն տարանջատել համաշխարհային մասշտաբով և տարածաշրջանային մակարդակով ընթացող աշխարհաքաղաքական բնույթի գործընթացների հիմնական ուղղություններն ու զարգացումները: Երկրորդ հիմնահարցը, որը ևս լուծում է պահանջում, այն է, որ, որոշակիորեն ճանաչելով և իմաստավորելով համընդգրկուն մարտահրավերները, անհրաժեշտ է որոշակիացնել տարածաշրջանային այն հնարավոր քաղաքական զարգացումները, որոնք պայմանավորված են համաշխարհային գործընթացներով և անմիջականորեն կամ էլ միջնորդավորված մեխանիզմներով ներգործում են տարածաշրջանային ներկա կամ հնարավոր իրողությունների կայացման վրա: Երրորդ՝ հայ հավաքական քաղաքական միտքը պետք է ճշգրտի, թե որո՞նք են հայ ժողովրդի գոյատևման և զարգացման ռազմավարական շահերից բխող առաջնահերթությունները: Հարկ է հստակեցնել Հայաստանի տեղն ու դերը, ինչպես նաև հետագա անելիքներն այս տարածաշրջանում:

Հարց է առաջանում. որո՞նք են աշխարհաքաղաքական այն նոր մարտահրավերները, որոնց բարեհաջող դիմակայելու նպատակով Հայաստանը, Արցախը և Սփյուռքը պետք է համատեղ ջանքերով և ուժերով մշակեն քաղաքական, տնտեսական, ռազմական և հոգևոր-մշակութային բնույթի այնպիսի անընկալունակություն (իմունիտետ), որը հայ էթնոսի խոցելիության աստիճանը կհասցնի նվազագույնի:

Այժմ փորձենք արտահայտել մի քանի նկատառումներ Հայաստանին և Արցախին սպասվող քաղաքական մարտահրավերների վերաբերյալ:

1. Բազմաբևեռ աշխարհի ձևավորման նախաշեմին, մասնավորապես փոքր և միջին ներուժ ունեցող երկրների համար, բազմավեկտոր աշխարհաքաղաքական կողմնորոշումների փուլը, ըստ իս, առաջիկա 10 կամ 15 տարիների (հնարավոր է՝ ավելի շուտ) ընթացքում անխուսափելիորեն կմոտենա իր տրամաբանական ավարտին:

Ինչպես հայտնի է, ԽՍՀՄ-ի կողմից ղեկավարված Վարշավայի ռազմաքաղաքական դաշինքի փլուզումից հետո աշխարհը դարձավ միաբևեռ, որի հետևանքով մարդկության անվտանգ ապագայի հեռանկարի հնարավորությունները չնվազեցին: ԱՄՆ-ը, մնալով միակ գերտերությունն աշխարհում, իր կողմից ղեկավարվող ՆԱՏՕ-ի հետ միասին գրեթե մշտապես քաղաքական խանդով է արձագանքում աշխարհի մյուս հզոր երկրների՝ նոր ուժային կենտրոններ ձևավորելու փորձերին: Այդուհանդերձ, Եվրոմիության, Ռուսաստանի, Չինաստանի, Ճապոնիայի կողմից աշխարհաքաղաքական նոր բևեռներ ձևավորելու փորձերը նույնպես ակնհայտ են: Գաղտնիք չէ նաև, որ Եվրոպական միությունը ցանկանում է ինչ-որ ձևերով ազատվել ԱՄՆ-ի գերակա ներկայությունից Հին մայրցամաքում, իսկ Ռուսաստանը վերջին տասնամյակում անընդհատ ձգտում է իր երբեմնի ազդեցությունը վերականգնել և ընդլայնել հետխորհրդային գրեթե բոլոր պետություններում և, նույնիսկ, «երրորդ աշխարհում»: «Եվրոպան, որը, թերևս, փորձում է տնտեսական ոլորտում մրցակից դառնալ ԱՄՆ-ին, ոչ քիչ ժամանակ անց կհասնի միա-

վորման այնպիսի աստիճանի, որը թույլ կտա մրցակցել ամերիկյան «անիվների» հետ: Իրեն հատկացված աշխարհաքաղաքական տարածությունից դուրս եկավ նաև Ճապոնիան, որը մի ժամանակ ստանձնել էր հաջորդ գերտերության դերը:

Չնայած իր տնտեսական լուրջ հաջողություններին, Չինաստանը, այդուհանդերձ, երկու սերունդների կյանքի ընթացքում դեռ կմնա աղքատ երկիր, միաժամանակ նրան սպասում են լուրջ քաղաքական բարդություններ: Ռուսաստանն արդեն վազքի մասնակից չէ: Կարճ ասած՝ Ամերիկան չունի և առաջիկայում էլ չի կարող ունենալ որևէ հակակշիռ ամբողջ աշխարհում»,- ակնհայտ վստահությամբ նշում է Զ. Բժեզինսկին[1]:

Հայաստանը, ինչպես հայտնի է, քաղաքական անկախություն ձեռք բերելուց հետո վարում է բազմավեկտոր արտաքին քաղաքականություն: Հարկ է նկատել, որ նման արտաքին քաղաքականությունը հիմնականում իրեն արդարացնում է, քանզի դեռևս բազմաբևեռ աշխարհի ձևավորման փորձեր են արվում. դա ավարտված-կայացած իրողություն չէ:

Երկարաժամկետում (15–20 տարիների ընթացքում) զարգացող երկրները այս կամ այն չափով ու ձևերով անխուսափելիորեն կդաշնակցեն ապագայում ձևավորվելիք աշխարհաքաղաքական որևէ բևեռի հետ: Ուստի, որպեսզի Հայաստանը խուսափի ապագա աշխարհաքաղաքական կողմնորոշմանն առնչվող արտաքին ու ներքին հնարավոր քաղաքական ցնցումներից, պետք է հենց ներկա փուլում նախապատրաստվի ապագայում սպասվելիք համաշխարհային վերադասավորումներին: Այլ կերպ ասած՝ այն երկիրը կարող է շահող դուրս գալ ապագա արտաքին քաղաքական վերադասավորումների լաբիրինթոսից, ով ներկայումս արդեն հայեցակարգային մակարդակում, ապագա աշխարհաքաղաքական ռազմավարական շահերի բախման համատեքստում, հնարավորինս **ճիշտ կորոշի համապատասխան բևեռը կամ ուժային կենտրոնը, որին էլ ուղղված կլինի նրա աշխարհաքաղաքական կողմնորոշումը:** «Նոր իրադրությունը արմատապես տարբերվում է անցյալում եղածից և ներկայացնում է ուժերի դասավորության սկզբունքային փոփոխություններ, իմա՝ ընթանում են ինչպես քաղաքական, այնպես էլ միջազգային ֆինանսա-տնտեսական հարաբերությունների նոր ճարտարապետության ձևավորման գործընթացներ, որոնք պետք է համապատասխանեն նոր իրողություններին»[2],– նշում է հայտնի ռուս քաղաքագետ Ի. Վասիլենկոն: Հակառակ պարագայում, եթե որևէ երկիր չունի գիտականորեն հիմնավորված և ապագային միտված պետական ռազմավարական շահերի պաշտպանության վերաբերյալ հայեցակարգ, ապա աշխարհաքաղաքական մարտավարական շահերի համար մղվող պայքարում կարող է անդառնալիորեն լուրջ կորուստներ ունենալ:

2. Ներկայումս ընթացող համընդգրկուն և բազմաբևեռ աշխարհի ձևավորման գործընթացներում նկատելի են հետաքրքիր, երբեմն նաև խորամանկ միտումներ: Այսինքն՝ որպեսզի ակնհայտ չլինեն մեկ կամ մի քանի ուժային կենտրոնների կողմից կառավարվող համաշխարհային ծավալի գործընթացների իմաստն ու նպատակը, ազդեցության ոլորտների բաշխմանն ու վերաբաշխմանն ուղղված քաղաքական-դիվանագիտական գործողությունները տեղափոխվել են տարածաշրջանային (ռեգիոնալ) տարբեր

---

[1] **Бжезинский З.,** Выбор: Мировое господство или глобальное лидерство. М., 2010, с. 7–8.
[2] **Василенко И. А.,** Политология. М., 2012, с. 362.

մակարդակներ: Ուստի պատահական չէ, որ երկրագնդի տարբեր ծայրերում տեղային (լոկալ) բնույթի բախումները փորձում են լուծել ոչ միայն հակադրվող կողմերի մասնակցությամբ, այլև տարածաշրջանային, այսպես կոչված, «գերտերությունների» («խաղացողների») օգնությամբ: Իսկ վերջիններս էլ նման դեպքերում ձգտում են իրենց ազգային-պետական ռազմավարական շահերը հմտորեն համադրել գերտերությունների հետապնդած աշխարհաքաղաքական շահերի հետ՝ տարածաշրջանի այս կամ այն երկրի (երկրների) հաշվին «պոկելով» ոչ իրենց պատկանող «փայաբաժինը»: Այս համատեքստում նշենք, որ տարածաշրջանային բարդ ու հակասական նման զարգացումների պայմաններում, ինչպես վկայում է պատմությունը, հիմնականում շահեկան դիրքում կարողանում հայտնվել դիվանագիտական մեծ փորձ ունեցող մեր հարևանը՝ Թուրքիան:

Ինչպես վերն ասվեց, տարածաշրջանային բախումները, հիմնականում միայն հակառակորդ կողմերի միջոցով չեն լուծվում: Այսինքն՝ երկրագնդի այս կամ այն մասում ծագած կոնֆլիկտը կարող է, այսպես կոչված, «մաքուր» տարածաշրջանային բնույթ չկրել: Դա կարող է ծագել «մաքուր» տեղային նախադրյալների առկայության պայմաններում, սակայն լուծմանն առնչվող հարցերի դասակարգման ու համադրման գործընթացները զարգանան տվյալ տարածաշրջանից դուրս:

Հայաստանի աշխարհագրական ներկայիս տարածքը դժվար է բարենպաստ համարել: Սակայն, միաժամանակ, կարելի է արձանագրել այն իրողությունը, որ ամեն մի աշխարհագրական տարածք, իր թերություններով հանդերձ, օժտված է նաև բազմաթիվ առավելություններով: Հասկանալի է, որ օբյեկտիվ իրողություններից դժգոհելը անօգուտ զբաղմունք է: Պարզապես հարկավոր է առավելագույնս օգտվել աշխարհագրական այն տարածքից, որտեղ գտնվում է Հայաստանը: Քաղաքական փիլիսոփայությունը գործնականում փաստում է հետևյալը. որքանով որ մեծ երկիրը կարող է դառնալ փոքր, այդքանով էլ, աշխարհաքաղաքական հանգամանքների որոշակի դասավորության պայմաններում, փոքրը կարող է ընդարձակվել և հաստատվել որպես մեծ պետություն (պատմությունը տվել է բազում օրինակներ): Քաղաքականության մասին հայտնի է հետևյալ ասույթը. «Քաղաքականությունը հնարավորի արվեստ է»: Սակայն սա կարելի է նաև այլ տեսանկյունից ձևակերպել. «Քաղաքականությունը անհնարինը հնարավոր դարձնելու արվեստ է»: Կարծում եմ, որ մենք՝ հայերս, ստիպված ենք ղեկավարվել երկրորդ տարբերակով, քանզի մեր ազգի առջև ծառացած բազում հիմնահարցերի հայանպաստ լուծումները հրամայաբար պահանջում են հենց այդ սկզբունքի հետևողական գործադրում:

Պետության գոյության պահպանումը և հզորության ապահովումը գործնականում իրականացվող քաղաքականության արդյունք է: Պետության կործանումը տվյալ ժամանակաշրջանի պահանջները ոչ համարժեքորեն և ոչ ճկուն իրականացվող քաղաքականության հետևանք է: Իսկ պետականությունը կորցրած ազգը դարերի ընթացքում ոչ թե ապրում ու զարգանում է, այլ պարզապես գոյատևում է առանձին-առանձին հատվածներով: Ընդ որում, գոյատևում են ոչ միայն հայրենի հողի վրա ապրողները, այլև օտար երկրներում սփռվածները: Այսինքն՝ ազգային պետության կործանումից հետո կորցրինք նաև պատմական հայրենիքի գերակշռող հատվածը, և հայ ազգի թվակազմը նվազեց թե՛ դարերի ընթացքում իրականացված բազում ցե-

ղասպանությունների և թե՛ օտար երկրներում ուծացումների պատճառներով: Միաժամանակ, դարեր շարունակ ամբողջ աշխարհում սփռված հայերի տաղանդը նպաստել և ծառայել է օտար պետությունների ռազմական, տնտեսական և հոգևոր-մշակութային տարբեր ոլորտների զարգացման ու հզորացման գործին:

3. Եթե ընդհանրացնենք նախորդ հազարամյակում հայ ազգի կեցության ձևը, ապրելու կերպը, եղանակը, ապա դա կարելի է բնութագրել իբրև գոյատևման ռազմավարություն: Սակայն եթե նախորդ դարերը հայ ազգի համար եղել են ընդամենը գոյատևման ժամանակաշրջաններ՝ հիմնված աշխատասիրության և սեփական տեսակը բոլոր հնարավոր միջոցներով պահպանելու կենսական բնազդի վրա, ապա XXI դարը պիտի հայի տեսակի համար դառնա քաղաքական մտքի զարթոնքի դարաշրջան: Իսկ ավելի հստակ՝ հայոց անկախ պետության գոյության պայմաններում հարկավոր է ստեղծել բոլոր նախադրյալները, որպեսզի հայ ազգը գոյատևման ռազմավարությունից վերջապես անցում կատարի զարգացման և հզորացման ռազմավարության իրականացման դարաշրջան: Ինչպես վկայում է արևմտյան զարգացած երկրների հարուստ փորձը, զարգացման ռազմավարության հիմնական երաշխիքը կարող է լինել հայոց քաղաքագիտական համակարգված մտքի ձևավորման խնդրի լուծումը, որը մեզանում դեռևս բացակայում է: Ամբողջ հարցն այն է, որ մենք պետք է կարողանանք ազգովի, բարձր պատասխանատվությամբ գնահատել պատմության կողմից մեզ տրված չափազանց սուղ ժամանակահատվածը՝ կառուցելու անկախ և հզոր պետականություն՝ նաև Սփյուռքի ամենաակտիվ աջակցությամբ: «Ամէն ժողովուրդ իր ուսերի վրա է կրում իր պատմական բախտի բեռը: Նուազ ոգելից եւ խոստումնալի է այն ժողովուրդը, որը գնալով չի երիտասարդանում հոգեպես, որին պակասում է իր պատմական առաքելութեան գիտակցությունը»,– միանգամայն ճշմարտացիորեն նկատել է հայոց քաղաքական մտքի ռազմագետը՝ Գարեգին Նժդեհը[3]:

Գուցե եկել է պատմական այն հրամայական պահը, երբ համատեղ ուժերով և հայոց նաև քաղաքագիտական մտքի օգնությամբ պետք է փորձել ձևավորել Նժդեհի պատգամած «պատմական առաքելության գիտակցությունը» և բացահայտել, թե որտեղ է թաքնված հայի հզորության հոգևոր աղբյուրը, որը հարկ է ծառայեցնել հայրենիքի հզորացման գործին: Սա այն դեպքում, երբ, ինչպես դարեր առաջ, այնպես էլ ներկա փուլում համաշխարհային քաղաքականությունը շարունակում է հենվել միմյանց լրացնող հետևյալ երեք սկզբունքների վրա.

1. Ստատուս քվոյի պահպանման քաղաքականություն, որի հիմնական նպատակը բոլոր միջոցներով միջազգային հարաբերություններում ամբողջապես կամ էլ առանձին տարածաշրջանում մինչև տվյալ պահը ունեցած իշխանության պաշտպանությունն է, իսկ հնարավորության դեպքում նաև ազդեցության սահմանների ընդարձակումը:
2. Համաշխարհային տիրապետության հաստատման քաղաքականություն, որն արտահայտվում է հետևյալ կերպ. ձգտել աշխարհում կամ էլ առանձին տարածաշրջանում փոխել գոյություն ունեցող իշխանության կամ ազդեցության հարաբերակցությունը, այսինքն՝ հնարա-

[3] **Գարեգին Նժդեհ:** Բանտային գրառումներ (խորհրդածութիւններ), Եր., 1993 , էջ 27:

վորության դեպքում հիմնովին կամ էլ մասամբ վերածնել աշխարհի քաղաքական քարտեզը:

3. Հեղինակության, վարկանիշի ամրապնդման քաղաքականություն, որի կարևորությունը գործնականում աննշան է, քանզի, վերջին հաշվով, ծառայեցվում է կամ ստատուս քվոյի ամրապնդմանը, կամ էլ, այսպես կոչված՝ կայսերապետական քաղաքականության իրականացմանը:

Համենայնդեպս, հայ-ադրբեջանական քաղաքական, դիվանագիտական և քարոզչական հակամարտության ավելի քան քսան տարիների փորձը ցույց է տալիս, որ, ըստ էության, միայն աշխարհաքաղաքական շահեր հետապնդող հզոր տերություններն են առայժմ բծախնդիր հետևողականություն ցուցաբերում վերոհիշյալ երեք սկզբունքների կիրառման նկատմամբ աշխարհում՝ ընդհանրապես, իսկ տվյալ տարածաշրջանում՝ մասնավորապես:

Վերը նշված երեք աշխարհաքաղաքական հաստատումներից բխող հրամայական պահանջը կարևորելու տեսանկյունից առաջարկում ենք հետևյալը.

1. Հարկավոր է հայոց պետական քաղաքական մտքի օգնությամբ ճշգրտել, թե Հայաստանը աշխարհաքաղաքական ինչպիսի չափումների պայմաններում պիտի գտնվի և գործի:
2. Աշխարհաքաղաքական և տարածաշրջանային զարգացումների հիմնական միտումների հեռահար նպատակները հնարավորինս օբյեկտիվ հասկանալու համար անհրաժեշտ է համակարգել նման խնդիրներով զբաղվող գիտահետազոտական կենտրոնների քաղաքագիտական միտքը:
3. Հայաստանի ռազմավարական շահերի խոր իմացության հիման վրա պետք է մշակել աշխարհաքաղաքական այն չափումները, որոնք ուղղակի ածանցված չեն լինի տարածաշրջանային տարաբնույթ և անկանխատեսելի զարգացումներից, այլ, ընդհակառակը, կդարձնեն դրանք մեզ համար հնարավորինս կանխատեսելի:

Նախորդ հազարամյակի ընթացքում քաղաքական հայանպաստ մտքի բացակայության պայմաններում բարոյական ըմբռնումների վրա հիմնված և մշտապես դրսևորված պաշտպանական ռազմավարությունը պարտադիր կերպով անհրաժեշտ է փոխարինել XXI դարի հայ քաղաքագիտական համակարգված մտքի քարոզչական-հարձակողական ռազմավարությամբ: Մեր խորին համոզմամբ՝ Հայաստանի Հանրապետությունը, Արցախի հետ միասին (անշուշտ, նաև Սփյուռքի օգնությամբ), երբեք չի կարող ունենալ երաշխավորված ապագա, եթե առաջիկա երկու տասնամյակների ընթացքում չկայանա որպես տարածաշրջանային ռազմաքաղաքական գործոն:

«Ազգային ոգի,– ահա՛ գերագոյն հերոսը, միա՛կը, մեր պատմութեան անիւը դարձնող, մեր հաւաքական ճակատագիրը վարող հերոսը:

Էսպէս միայն դա է գործում պատմութեան մեջ եւ պատմութեան համար: Անհայտ հերոսներն ոչ այլ ինչ են, եթե ոչ միայն անձնաւորողներն այդ ոգո՛ւ»[4],– գրում է Գարեգին Նժդեհը:

Նժդեհի երազած ազգային ոգու և հայոց քաղաքական-քաղաքագիտական հասուն ու գրագետ մտքի անքակտելի դաշինքը միայն կարող է ամուր

[4] Նույն տեղում, էջ 52:

հիմքեր ստեղծել Հայաստանի՝ տարածաշրջանային ռազմաքաղաքական գործոն դառնալու և երաշխավորված ապագա ունենալու համար:

Օգտագործված գրականություն

1. Գարեգին Նժդեհ: Բանտային գրառումներ (խորհրդածութիւններ), Եր., 1993:
2. Почепцов Г. Г., Стратегия. М., 2009.
3. Панарин А. С., Философия политики: учеб. пособие для политических факультетов гуманитарных вузов. М., 1994.
4. Философия власти /под ред. В. В. Ильина/. М., 1993.
5. Бжезинский З., Выбор: Мировое господство или глобальное лидерство. М., 2010.
6. Василенко И. А., Политология. М., 2012.

СИРАК ОГАНЕСЯН
Доцент кафедры правоведения и политологии АГЭУ,
кандидат политических наук

Современная армянская политическая мысль перед новыми вызовами.– Сформированная в прошлых тысячелетиях в условиях отсуствия политической мысли, основанная на моральных принципах и постоянная оборонительная стратегия должна быть в обязательном порядке заменена пропагандистско-наступательной стратегией политологической системы 21-го века. РА вместе с Арцахом никогда не сможет иметь гарантированного будущего, если в ближащие два десятилетия не станет региональным военно-политическим фактором.

Ключевые слова: *геополитика, политический вызов, стратегия, военно-политический фактор, стратегия существования, стратегия развития, стратегия пропаганды.*
JEL: Y8, Y9, Z1

SIRAK HOVHANNISYAN
Associate Professor of the Chair of Political Science and Law of ASUE,
PhD in Law

Modern Armenian Political Thought before the Compulsion of New Challenges.– At present, Armenia faces geopolitical challanges. Armenia can only overcome new obstacles of any kind, if it possesses a new level of political thought and becomes political and military factor in the region. If Armenia wants to overcome both existing and coming political and economic difficulties, it is mandatory to implement new political thought in every aspect of life and new approach to interstate relations.

Key words: *geopolitics, political challenge, strategy, military-political factor, strategy of survival, development strategy, strategy of propaganda.*
JEL: Y8, Y9, Z1